ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին

եռամսյակային հաշվետվություն

(ՁԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2015թ. ապրիլ-հունիս ժամանակահատված

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Վանաձոր, 2015թ.

Հաշվետվությունը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմող՝ Անուշ Համբարյան
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
Հայաստան, Վանաձոր 2001,
Հեռ.՝ (+374 322) 4 22 68
Ֆաքս՝ (+374 322) 4 12 36
Էլ. փոստ՝ hcav@hcav.am
www.hcav.am

Նախաբան

Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել է 15 առցանց լրատվամիջոց[1]: Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: Մարդու իրավունքի խախտման դեպքերն աղյուսակավորվել են ըստ ոստիկանության աշխատակիցների կատարած գործողությունների և դրանց վայրերի:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու խմբի՝ անհատական դեպքեր[2] և հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլ:

2015թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում գրանցված մարդու իրավունքի խախտումների դեպքերի մասին համեմատական ամփոփ տվյալներ

ԶԼՄ-ների մշտադիտարկման ընթացքում հաշվետու ժամանակահատվածում՝ 2015թ. ապրիլ-հունիս ամիսներին, արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքի խախտումների 85 դեպք: Նախորդ եռամսյակի համեմատությամբ դեպքերի թիվն աճել է 29-ով (կամ 52%-ով)[3]:

Արձանագրված դեպքերից 49-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով, որը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատությամբ աճել է 11-ով (կամ 29%-ով), իսկ անհատական դեպքերի թիվն աճել է 18-ով (կամ 50%-ով)[4]:

Առաջին եռամսյակի ընթացքում խախտվել է 10 տեսակի իրավունք, իսկ երկրորդ եռամսյակի ընթացքում՝ 12: Երկու եռամսյակների ընթացքում ամենամեծ թվով խախտումները տեղի են ունեցել խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի և անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի հետ կապված, ընդ որում, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտումների թիվն աճել է 1-ով (կամ 5.3%-ով), իսկ անձնական ազատության և

---

[1] Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.hetq.am, www.168.am, www.civilnet.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.zham.am, www.media.am, www.a1plus.am, www.ccc.am:

[2] Խախտումների այդ խումբն առանձնացվել է որպես անհատական դեպքերի խումբ այն իմաստով, որ դեպքերը տեղի չեն ունեցել որևէ հանրային միջոցառման ժամանակ:

[3] Տե՛ս Աղյուսակ 1

[4] Տե՛ս Աղյուսակ 2 և 3

անձեռնմխելիության իրավունքի խախտումների թիվը՝ 9-ով (կամ 75%-ով): Հարկ է նշել, որ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտումների անհատական դեպքերի թիվն աճել է 7-ով (կամ 233%-ով), իսկ հավաքների ժամանակ նույն իրավունքի խախտումների թիվը՝ 2-ով (կամ 22%-ով): Հատկանշական է, որ առաջին կիսամյակում գրանցվել է լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտման 2 դեպք, մինչդեռ 2-րդ եռամսյակում՝ 9 դեպք, որոնցից 6-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ, իսկ 5-ը զուգորդվել են նաև այլ իրավունքների խախտմամբ (անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք, գույքի անձեռնմխելիության իրավունք): Աճել է նաև ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտումների թիվը՝ 4-ից հասնելով 11-ի, որոնցից 4-ը տեղի է ունեցել հավաքների ժամանակ, ընդ որում, 1-ի դեպքում խախտվել է նաև լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը[5]: 2015թ. երկրոդ եռամսյակում գրանցվել է նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման 5 անհատական դեպք (նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել է 1-ով) և 6 դեպք (աճել է 2-ով) հավաքների ժամանակ: Անհատական դեպքերի ժամանակ ոտնահարվել են նաև այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը (առաջին կիսամյակում գրանցվել էր 3 դեպք, երկրորդում՝ 4), բնակարանի անձեռնմխելիության իրավունքը (առաջին եռամսյակում գրանցվել էր 1 դեպք, երկրորդում՝ 3), տեղեկատվություն ստանալու իրավունքը (առաջին եռամսյակում գրանցվել էր 3 դեպք, երկրորդում՝ 1), կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը (նախորդ եռամսյակում այս իրավունքի խախտման անհատական դեպք չէր գրանցվել, իսկ երկրորդ եռամսյակում՝ 2 դեպք), իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (առաջին եռամսյակում որևէ դեպք չէր արձանագրվել, իսկ երկրորդ եռամսյակում՝ 1 դեպք)[6]: Իսկ հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքից, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքից, լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքից, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքից զատ, որոնց վերևում անդրադարձ է կատարվել և որոնց հետ կապված ամենամեծ թվով խախտումներն են եղել, խախտվել են նաև հետևյալ իրավունքները՝ գույքի անձեռնմխելիության իրավունքը (առաջին եռամսյակում որևէ դեպք չէր գրանցվել, իսկ

[5] Տե՛ս Աղյուսակ 1
[6] Տե՛ս Աղյուսակ 2

2-րդ եռամսյակում՝ 3 դեպք), իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը՝ (նախորդ եռամսյակի ընթացքում գրանցվել էր 3, երկրորդ եռամսյակի ընթացքում՝ 1 դեպք), կարծիքն ազատորեն արհատայտելու իրավունքը (առաջին եռամսյակում որևէ դեպք չէր գրանցվել, իսկ 2-րդ եռամսյակում՝ 1 դեպք)[7]:

Ինչպես նախորդ եռամսյակում, այս եռամսյակում նույնպես ամենաշատ դեպքերը գրանցվել են Երևանում, սակայն նրանց թիվն աճել է 31-ով (կամ 86%-ով)՝ հասնելով 67-ի: Գյումրիում դեպքերի թիվը դարձել է 7՝ նախորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 50%-ով[8]:

2015թ. առաջին կիսամյակում գրանցված մարդու իրավունքի խախտումների 56 դեպքերից 22-ի դեպքում ընդհանուր թվով 123 խախտում է տեղի ունեցել, իսկ մնացած 34-ի դեպքում հայտնի չէ, թե քանի անգամ է մարդու իրավունք խախտվել: Երկրորդ կիսամյակում տեղի ունեցած 85 դեպքերից 59-ի ժամանակ մարդու իրավունքի 434 խախտում է տեղի ունեցել, իսկ մնացած 26-ի դեպքում հայտնի չէ, թե քանի անգամ է մարդու իրավունք խախտվել: Այսպիսով 2015թ. երկրորդ եռամսյակի ընթացքում 2.5 անգամ աճել է այն դեպքերի թիվը, երբ հնարավոր է եղել որոշել, թե քանի հոգու իրավունք է խախտվել, իսկ խախտումների թիվն ավելացել է 3.5 անգամ[9]: Հարկ է նշել, որ այն դեպքերի մեծ մասը, որոնց ժամանակ հստակ չէ, թե քանի անգամ է իրավունք խախտվել կամ կոնկրետ քանի հոգու իրավունք է խախտվել, տեղի են ունեցել հավաքների ժամանակ, որոնց մասնակցել է մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր մարդ:

[7] Տե՛ս Աղյուսակ 3

[8] Տե՛ս Աղյուսակ 4

[9] Տե՛ս Աղյուսակ 5

2015թ. 2-րդ եռամսյակի ընթացքում ոստիկանության կողմից մարդու իրավունքի խախտումների անհատական դեպքերի մասին ընդհանուր տվյալներ

2015թ. ապրիլ-հունիս ամիսներին արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման 36 անհատական դեպք, որոնցից 10-ի դեպքում խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 5-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, 3-ի դեպքում բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, 1-ի դեպքում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 4-ի դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 3-ի դեպքում լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 2-ի դեպքում՝ կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը, 1-ի դեպքում՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը, 7-ի դեպքում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը:

Անհատական դեպքերից 2-ը գրանցվել են Արարատի մարզի Վեդի քաղաքում, 2-ը՝ Լոռու մարզի Ալավերդի քաղաքում, 2-ը՝ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, 1-ը՝ Լոռու մարզի Տաշիր քաղաքում, 4-ը՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, 2-ը՝ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, 1-ը՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում, 22-ը՝ Երևան քաղաքում:

Անհատական դեպքերից 23-ի դեպքում խախտվել է 1 հոգու իրավունք, 4-ի դեպքում՝ 2, 1-ի դեպքում՝ 3, 1-ի դեպքում՝ 4, 2-ի դեպքում՝ 5, 1-ի դեպքում՝ 7, 4-ի դեպքում հնարավոր չէ որոշել, թե քանի հոգու իրավունք է խախտվել:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված անհատական դեպքերի հակիրճ նկարագրություններ՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (կամ անգործության)

	Դեպքերի թիվ
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում	**10**
• **բերման ենթարկում**	**2**
Դեպք 1. Ապրիլի 7-ին Երևանի Ազատության հրապարակի մոտակայքից ոստիկանները բռնի ուժի կիրառմամբ Կենտրոնականի բաժին են բերման ենթարկվել լրագրող, ակտիվիստ Գայանե Առուստամյանին այն պատճառով, որ նա դիտողություն է արել ոստիկանին, որը սուլիչով հանկարծակի բարձր սուլել է իր ականջի տակ:[10]	1
Դեպք 2. Հունիսի 13-ին քաղբանտարկյալ, «Ցեղակրոն» կուսակցության նախագահ Շանթ Հարությունյանի որդին՝ Շահեն Հարությունյանը Եվրո-2016-ի ընտրական փուլի Հայաստան-Պորտուգալիա ֆուտբոլային խաղի առաջին խաղակեսի 43-րդ րոպեին մարզադաշտ էր վազել՝ ձեռքին պահելով «Ազատություն Շանթ Հարությունյանին» պաստառը , որը ոստիկաններն անմիջապես խլել էին նրա ձեռքից: Շահենին բերման են ենթարկել Ոստիկանության Կենտրոնականի բաժին և մեկ ժամ անց ազատ են արձակել:[11]	1
• **բերման ենթարկում (քաղաքական հայացքների պատճառով)**	**4**
Դեպք 1. Ապրիլի 7-ին բերման են ենթարկել Հիմնադիր խորհրդարանի Գյումրիի գրասենյակի ղեկավար Արամ Հակոբյանին:[12]	1
Դեպք 2. Ապրիլի 7-ին բերման են ենթարկել Հիմնադիր Խորհրդարանի Կապանի գրասենյակի ղեկավար Գևորգ Գասպարյանին:[13]	1
Դեպք 3. Ապրիլի 7-ին բերման են ենթարկել Հիմնադիր խորհրդարանի Վանաձորի գրասենյակի ղեկավար Հովհաննես Ղազարյանին:[14]	1

[10] Լրագրող Գայանե Առուստամյանին բերման են ենթարկել ուժի կիրառմամբ, http://armtimes.com/hy/read/63721
[11] Շահեն Հարությունյանին ազատ արձակեցին, http://168.am/2015/06/13/502610.html
[12] Գարեգին Չուգասզյանը, Ժիրայր Սեֆիլյանը, Վարուժան Ավետիսյանը, Պավել Մանուկյանը, Գեւորգ Սաֆարյանը ձերբակալված են, http://www.armtimes.com/hy/read/62223
[13] Տե՛ս 5
[14] Տե՛ս 5

Դեպք 4. Ապրիլի 7-ին բերման են ենթարկել Հիմնադիր խորհրդարանի՝ «100-ամյակն առանց ռեժիմի» շարժման անդամներ Ժիրայր Սեֆիլյանին, Վարուժան Ավետիսյանին, Պավել Մանուկյանին, Գևորգ Սաֆարյանին, Գարեգին Չուգասզյանին, Կարո Եղնուկյանին Ժիրայր Սեֆիլյանի եղբայր Թորոս Սեֆիլյանին:[15]	1
• **ձերբակալություն (քաղաքական հայացքների պատճառով)**	**2**
Դեպք 1. Ապրիլի 7-ին ձերբակալել են Հիմնադիր խորհրդարանի անդամներ Ժիրայր Սեֆիլյանին, Վարուժան Ավետիսյանին, Պավել Մանուկյանին, Գևորգ Սաֆարյանին, Գարեգին Չուգասզյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով:[16]	1
Դեպք 2. Ապրիլի 7-ին ձերբակալել են Հիմնադիր խորհրդարանի Գյումրիի գրասենյակի զեկավար Արամ Հակոբյանին: Նրա նկատմամբ քրեական գործ է հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի 236 հոդվածի 1-ին մասով, այն է՝ ապօրինի կերպով զենք պատրաստելը:[17]	1
• **քաղաքացուն սահմանված ժամկետից երկար ոստիկանության բաժանմունքում պահելը**	**1**
Դեպք 1. Ապրիլի 29-ին՝ ժամը 10:30-ին քաղաքացուն ՀՀ ոստիկանության Արարատի բաժանմունքի աշխատակիցները բերման են ենթարկել ոստիկանության Վեդիի բաժին, որտեղ ապօրինի պահել են մինչև ժամը 21:00-ն:[18]	1
• **ոստիկանական բաժանմունքում պահելով քաղաքացուն ազատությունից զրկում**	**1**
Դեպք 1. Ապրիլի 25-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, 2 քաղաքացի ցանկացել են մասնակցել երաժիշտ Սերժ Թանկյանի մամուլի ասուլիսին, սակայն ոստիկանության աշխատակիցները նրանց տարել են ոստիկանության Կենտրոնականի բաժին և շուրջ 3 ժամ զրկել են ազատությունից:[19]	1
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում	**5**

[15] Տե՛ս 5
[16] Տե՛ս 5
[17] Ձերբակալվել է ՀԽ-ի Գյումրու գրասենյակի պատասխանատու Արամ Հակոբյանը, http://galatv.am/hy/news/104785/
[18] Քաղաքացին ապօրինի պահվել է ոստիկանությունում և ծեծվելու վերաբերյալ սպառնալիքներից վախենալով՝ տվել է սուտ ցուցմունքներ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4836
[19] Ոստիկանները բռնության գործադրմամբ քաղաքացուն և դստերը տեղափոխել են բաժին՝ խոչընդոտելով նրանց մասնակցությանը Սերժ Թանկյանի մամուլի ասուլիսին, http://www.ccc.am/hy/1428493746/139/3918

• **սպառնալիք հնչեցնելը**	**1**
Դեպք 1. 2015թ. հունվարից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցները՝ ներքին ավտոհավաքակայանի պետն ու նրա ենթական՝ ավտոհավաքակայանի ավագ երթակարգավարը ընկերության անսարք ավտոմեքենաների համար կազմել են դիզելային վառելիք ու բենզին ստանալու իրավունք վերապահող կեղծ փաստաթղթեր և ստացել շուրջ 4 մլն դրամի վառելիք: Դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործի շրջանակներում Կապանի փոխոստիկանապետ Հայկ Հովհաննիսյանը փորձել է ողջ պատասխանատվությունը բարդել երթակարգավարի վրա՝ պաշտպանության տակ վերցնելով ավտոհավաքակայանի պետին: Ըստ «Առավոտի» աղբյուրի, վկաների հավաստմամբ՝ նա սպառնացել է իրենց ու պահանջել, որ ավտոհավաքակայանի պետի անունը չտան:[20]	1
• **սպառնալիք, հայհոյանք և վիրավորանք հասցնելը, ծաղրի ենթարկելը**	**1**
Դեպք 1. Ապրիլի 14-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցները քաղաքացուն, նրա կնոջը, վերջինիս քրոջը և նրա ամուսնուն տարել են հիշյալ բաժին, հայտնել են, որ իրականում իրենց հայրը ոչ թե ինքնասպան է եղել, այլ սպանվել է իրենց կողմից: Այնուհետև ոստիկանության աշխատակիցները նրանց տվել են դատապարտվելու սպառնալիքներ, հայհոյել ու վիրավորել են և տեղյակ լինելով, որ հարում են կրոնական կազմակերպության, ծաղրի են ենթարկել:[21]	1
• **վիրավորանք հասցնելը**	**2**
Դեպք 1. Ապրիլի 7-ին Երևանի Ազատության հրապարակի մոտակայքից ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման ենթարկված լրագրող, ակտիվիստ Գայանե Առուստամյանին ոստիկանական մեքենայի մեջ վիրավորել են:[22]	1
Դեպք 2. Մայիսի 8-ին Yerkir.am-ի օպերատորը նկարահանել է, թե ինչպես է իրեն մոտեցող մուրացկան կնոջը փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանն ասում. «Դու սաղ ե՞ս հլը, ես գիտեմ՝ սատկել ես, աղջի»:[23]	1
• **հայհոյելը**	**1**

[20] Քննչականի քննիչը քրեական գործ է հարուցել ոստիկանապետի տեղակալի նկատմամբ, http://www.aravot.am/2015/06/10/579863/

[21] Ոստիկանները որդուն և վերջինիս կնոջը մեղադրելով «ինքնասպանություն» գործած հորը սպանելու մեջ՝ ապօրինի պահել են բաժնում, ծեծի ենթարկել, http://www.ccc.am/hy/1428493746/3/4818

[22] Լրագրող Գայանե Առուստամյանին բերման են ենթարկել ուժի կիրառմամբ, http://armtimes.com/hy/read/63721

[23] Դու սաղ ե՞ս հլը, ես գիտեմ՝ սատկել ես. Լեւոն Երանոսյանը՝ մուրացկան կնոջը, http://www.yerkir.am/news/view/85452.html

Դեպք 1. Մայիսի 20-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, քաղաքացին Ալավերդի քաղաքում իր ավտոմեքենայով քարշակել է իր ծանոթի խափանված ավտոմեքենան, երբ իրենց կանգնեցրել են ոստիկանության աշխատակիցները, ապա վիճաբանել և հայհոյել են իր ծանոթին:[24]	1
Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտում	**3**
• **խուզարկություն (քաղաքական հայացքների պատճառով)**	**3**
Դեպք 1. Ապրիլի 7-ի առավոտյան ոստիկանության աշխատակիցները խուզարկել են Հիմնադիր խորհրդարանի վանաձորցի պատգամավոր Հովհաննես Ղազարյանի բնակարանը և Հիմնադիր խորհրդարանի Վանաձորի գրասենյակը: Առգրավել են համակագիչներ, ինֆորմացիոն կրիչներ և այլն:[25]	1
Դեպք 2. Ապրիլի 7-ին ոստիկանության աշխատակիցները խուզարկել են Հիմնադիր խորհրդարանի Գյումրի քաղաքի պատասխանատու Արամ Հակոբյանի բնակարանը: Հայտնել են, որ խուզարկության արդյունքում նրա տան կտուրից հայտնաբերել են նռնակ, սակայն Արամ Հակոբյանի մերձավորների ասելով՝ կտուրը բաց է և ցանկացած մեկը կարող էր նռնակը դնել այնտեղ: Հետագայում պարզվել է, որ կտուրը հարևանի բնակարանինն է եղել: Ոստիկանության աշխատակիցները խուզարկել են նաև Հիմնադիր խորհրդարանի գրասենյակը:[26]	1
Դեպք 3. Ապրիլի 7-ին ոստիկանության աշխատակիցները խուզարկություններ են իրականացրել Հիմնադիր խորհրդարանի՝ «100-ամյակն առանց ռեժիմի» շարժման անդամներ Ժիրայր Սեֆիլյանի, Վարուժան Ավետիսյանի, Պավել Մանուկյանի, Գևորգ Սաֆարյանի, Կարո Եղնուկյանի, Գարեգին Չուգասզյանի բնակարաններում, ինչպես նաև Հիմնադիր խորհրդարանի գրասենյակում, առգրավել են համակագիչներ, ինֆորմացիոն կրիչներ և այլն:[27]	1
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի խախտում	**1**
• **խուզարկության ժամանակ քաղաքացուն իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունից զրկում**	**1**

[24] Ոստիկանները վիճաբանել, ապա բռնություն են կիրառել քաղաքացիների նկատմամբ. հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4857
[25] Տե՛ս 5
[26] Տե՛ս 5
[27] Տե՛ս 5

Դեպք 1. Ապրիլի 7-ին Հիմնադիր Խորհրդարանի Գյումրու գրասենյակի ղեկավար Արամ Հակոբյանի տունը խուզարկելիս ոստիկանները ՄԻՊ-ի ներկայացուցչին ու փաստաբանին թույլ չեն տվել ներս մտնել և տեղեկատվություն չեն տրամադրել խուզարկության հիմքերի մասին՝ այդպիսով նրան զրկելով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից:[28]	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում	**4**
• **քրեական գործ հարուցելը մերժելը**	**1**
Դեպք 1. ՀՀ ոստիկանությունը մերժել է ապրիլի 5-ին Բուդաղյան ընտանիքի բարեկամ, «Ոստիկանության Գորիսի վետերանների միավորման» նախագահ Ռոբերտ Հակոբյանին սպառնալիքներ և հայհոյանքներ հասցնելու դեպքի կապակցությամբ քրեական գործ հարուցել: Հակոբյանին սպառնացել էր Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որդին՝ Տիգրանը, ինչի վերաբերյալ Հակոբյանը հաղորդում էր ներկայացրել ոստիկանություն:[29]	1
• **անգործություն (հաղորդում ստանալուց հետո համապատասխան գործողությունների չիրականացում)**	**2**
Դեպք 1. Ապրիլի 2-ին փաստաբան Սեդա Սաֆարյանին է զանգահարել ոմն տղամարդ և անվայել, վիրավորական արտահայտություններ ու սպառնալիքներ է հնչեցրել իր ծավալած փաստաբանական գործունեության կապակցությամբ: Դեպքը տեղի ունենալուց հետո 12-րդ օրվա դրությամբ ոստիկանությունը ոչ մի քայլ չէր ձեռնարկել, թեև հենց նույն օրը հաղորդում էր ներկայացվել հանցագործության մասին:[30]	1
Դեպք 2. Ապրիլի 4-ին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որդին՝ Տիգրանը, սպառնացել և հայհոյել է Բուդաղյան ընտանիքի բարեկամ, «Ոստիկանության Գորիսի վետերանների միավորման» նախագահ Ռոբերտ Հակոբյանին, ինչի վերաբերյալ վերջինս դիմել է ոստիկանություն: Ըստ Հակոբյանի ունեցած տեղեկությունների, ապրիլի 7-ի դրությամբ ոստիկանությունը նրա նկատմամբ որևէ քայլ չէր ձեռնարկել:[31]	1

[28] Զաքարյան. «Քիմ Քարդաշյանի ու ՀՀ որոշ պաշտոնյաների նկատմամբ էլ քրգործ պետք է հարուցվեր», http://www.aravot.am/2015/04/15/561273/

[29] Ոստիկանությունը քրգործ չի հարուցի Լիսկայի որդու սպառնալիքների առնչությամբ, http://www.armtimes.com/hy/read/63402

[30] Իրավապահներն անտարբեր են 6-ամյա աղջնակի բռնաբարության և սպանության գործով փաստաբանի հասցեին հնչեցված սպառնալիքների գործով, http://www.1in.am/1597438.html

[31] Լիսկայի որդու նոր «սխրանքը». «Հայկական ժամանակ», http://www.aravot.am/2015/04/07/558430/

• **անգործություն (քաղաքացու խախտված իրավունքի վերականգման ուղղությամբ համապատասխան գործողությունների չիրականացում)**	**1**
Դեպք 1. «Հիմնադիր խորհրդարանի նախաձեռնությամբ մայիսի 18-ին կազմակերպված «Քաղաքական հետապնդումները և ստալինիզմի ուրվականը Հայաստանում» թեմայով կլոր սեղան-քննարկման հաջորդ օրը պոկվել և միջանցքում շպրտվել էր Քաղաքագետների միության ցուցանակը, որի նախագահ Հմայակ Հովհաննիսյանը նույնպես մասնակցել էր վերոնշյալ քննարկմանը, ինչպես նաև անջատվել էին միության քաղաքային հեռախոսահամարները: Քաղաքագետների միության քաղաքային հեռախոսակապը վերականգվել է միայն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի արագ արձագանքման խմբի միջամտությունից հետո, իսկ ոստիկանությունը դեպքի վայր չի ժամանել:[32]	1
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**3**
• **անգործություն (լրագրողների օրինական գործունեությունը խոչընդոտելը կանխելու ուղղությամբ գործողությունների չիրականացում)**	**1**
Դեպք 1. Ապրիլի 22-ին լրագրողներ Սիսակ Գաբրիելյանը և Ռոբերտ Անանյանը փորձել են նկարել «Արմենիա Մարիոթ» հյուրանոցին պատկանող սրճարանում գտնվող ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին, ռուսաստանաբնակ գործարար Սամվել Կարապետյանին, Տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանին, Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանին, սակայն հյուրանոցի դիմաց ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները խոչընդոտել են լրագրողների աշխատանքը, նրանցից մեկը երկու անգամ հարվածել է Սիսակ Գաբրիելյանին, հայհոյել նրան, մյուս անվտանգության աշխատողը հարվածել է Ռոբերտ Անանյանի ձեռքին և տեսախցիկին՝ պահանջելով չնկարահանել Սիսակ Գաբրիելյանի վրա հարձակված անվտանգության աշխատակիցների գործողությունները: Լրագրողները տարածքում ծառայություն իրականացնող ոստիկաններին խնդրել են կարգի հրավիրել անվտանգության աշխատակիցներին: Իրավապահները, սակայն, որևէ գործողություն չեն ձեռնարկել:[33]	1
• **լրագրողի գործունեության խոչընդոտում**	**2**

[32] Քաղաքագետների միության նկատմամբ հալածանքի նոր ալիք է սկսվել. Հիմնադիր խորհրդարան, http://armtimes.com/hy/read/64364

[33] Անվտանգության աշխատակիցները հարվածել են պաշտոնյաներին նկարող լրագրողներին, http://www.a1plus.am/1379188.html

Դեպք 1. Ապրիլի 7-ին ՀՔԾ-ում ծառայություն իրականացնող ոստիկաններն առանց պատճառ նշելու լրագրողներին թույլ չեն տվել նկարել ՀՔԾ-ի շենքի մոտ, որտեղ ի պաշտպանություն ձերբակալված ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Գոհարիկ Ենոքյանին հավաքվել էին մի խումբ անձինք:[34]	1
Դեպք 2. Մայիսի 8-ին Ռազմական ոստիկանության ներկայացուցիչները սկսեցին Եռաբլուրի միջոցառումը լուսաբանելու եկած լրագրողների հետ վիճաբանել և նրանց թելադրել, թե որտեղից կարող են լուսաբանել՝ այդպիսով խոչընդոտելով նրանց աշխատանքը:[35]	1
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի խախտում	**2**
• **հաղորդաշարի թողարկմանը խոչընդոտում**	**1**
Դեպք 1. «SOS» ինտերնետ շոուի Գ/7 հաղորդումը, որը մայիսի 24-ին բեռնվել էր YouTube կայքում, արգելափակվել է կայքի տնօրինության կողմից: YouTube-ի վարչակազմի հաղորդմամբ՝ իրենց բողոք էր ներկայացրել ՀՀ ոստիկանությունն առ այն, որ հաղորդումը խախտում է ոստիկանության հեղինակային իրավունքները, քանի որ հաղորդման մեջ օգտագործվել են կադրեր ոստիկանության «02» հաղորդումից: Հաղորդման ընթացքում հաղորդավար Վիլեն Գայֆեջյանը հեգնանքով է խոսում ոստիկանության աշխատակիցների գործողությունների մասին, մասնավորապես՝ զոհված զինվորների ծնողներին ՀՀ նախագահական նստավայրի դիմացից ուժով հեռացնելու դեպքի հետ կապված:[36]	1
• **հաղորդավարի դեմ դատական հայցի ներկայացում**	**1**
Դեպք 1. YouTube-ում հեռարձակվող «SOS» հաղորդաշարի՝ մայիսի 24-ին վերբեռնված հաղորդման ընթացքում ոտիկանության բռնի գործողություններին անդրադառնալուց հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն ու ոստիկանության աշխատակիցներ Արթուր Մադաթյանը և Սերգեյ Զաքարյանը դատական հայց են ներկայացրել հաղորդաշարի հաղորդավար Վիլեն Գայֆեջյանի դեմ: Հայցվորները պահանջել են հրապարակային ներողություն խնդրել ՀՀ ոստիկանությունից, ոստիկանության ծառայողներ Արթուր Մադաթյանից եւ	1

[34] ՀՔԾ-ի մուտքի մոտ հավաքվում են Գոհար Ենոքյանի համար, http://www.aravot.am/2015/05/07/569382/

[35] Եռաբլուրում լրագրողներին ջինսով չեն թողնում. «Տեսքը գցում եք, կողքի կանգնեք, որ չերեւաք», http://www.aravot.am/2015/05/08/569747/

[36] Հայաստանյան ինտերնետշոուի հաղորդումը YouTubeում արգելափակել են ոստիկանության բողոքից հետո, http://www.epress.am/2015/05/26/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%B6%D5%A5%D5%BF%D6%8A%D5%B7%D5%B8%D5%B8%D6%82%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82.html

Սերգեյ Զաքարյանից, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողներին վճարել փոխհատուցում 1-ական միլիոն դրամի չափով:[37]	
Տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտում	**1**
• **քաղաքացուն տեղեկատվություն ստանալու նպատակով Ազգային ժողովի շենք մուտք գործել թույլ չտալու փորձ**	**1**
Դեպք 1. Մայիսի 21-ին զոհված զինծառայողների ծնողները գնացել էին խորհրդարան՝ պատգամավորներին հորդորելու, որ իրենց հարցերը բարձրացնեն դատախազի առաջ: Մայրերից մեկը ցանկանում էր մտնել ԱԺ-ի շենք՝ հարց ուղղելու, սակայն ոստիկանները փորձում էին նրան դա թույլ չտալ:[38]	1
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտում	**7**
• **բռնության կիրառում**	**6**
Դեպք 1. Aravot.am-ի տեղեկություններով ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանն իր աշխատասենյակում երկու ապտակ է հասցրել ԲՀԿ-ական պատգամավոր Հրանտ Դավթյանին, ով մինչ այդ հայհոյել էր իր մեքենան կանգնեցրած ոստիկանին:[39]	1
Դեպք 2. Ապրիլի 7-ին Երևանի Ազատության հրապարակի մոտակայքից ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման ենթարկված լրագրող, ակտիվիստ Գայանե Առուստամյանին ոստիկանական մեքենայի մեջ հարվածել են:[40]	1
Դեպք 3. Ապրիլի 14-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցները քաղաքացուն, նրա կնոջը, վերջինիս քրոջը և նրա ամուսնուն տարել են հիշյալ բաժին, հայտնել են, որ իրականում իրենց հայրը ոչ թե ինքնասպան է եղել, այլ սպանվել է իրենց կողմից: Քաղաքացու նկատմամբ կիրառել են բռնություն:[41]	1

[37] Հայաստանի ոստիկանությունն ու «SOS»-ը կհանդիպեն դատարանում, http://media.am/Police-vs-SOS-lawsuit

[38] Որդեկորույս մայրերին վրդովվեցրել են Սեյրան Օհանյանի կնոջ լուսանկարները. «Մենք էլ էինք ուզում մեր որդիներով երջանկանալ», http://www.aravot.am/2015/05/21/574082/

[39] Ոստիկանապետն ապտակե՞լ է ԲՀԿ-ական պատգամավորին, http://www.aravot.am/2015/06/22/584355/

[40] Լրագրող Գայանե Առուստամյանին բերման են ենթարկել ուժի կիրառմամբ, http://armtimes.com/hy/read/63721

[41] Ոստիկանները որդուն և վերջինիս կնոջը մեղադրելով «ինքնասպանություն» գործած հորը սպանելու մեջ՝ ապօրինի պահել են բաժնում, ծեծի ենթարկել. http://www.ccc.am/hy/1428493746/3/4818

Դեպք 4. Ապրիլի 25-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում 2 քաղաքացի ցանկացել են մասնակցել երաժիշտ Սերժ Թանկյանի մամուլի ասուլիսին, սակայն ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են՝ նրանց նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելով դուրս են հանել հյուրանոցից և նստեցրել են ոստիկանական մեքենա:[42]	1
Դեպք 5. Մայիսի 20-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, քաղաքացին Ալավերդի քաղաքում իր ավտոմեքենայով քարշակել է իր ծանոթի խափանված ավտոմեքենան, երբ իրենց կանգնեցրել են ոստիկանության աշխատակիցները, հարվածել են իր ծանոթին, իսկ երբ ինքը միջամտել է, ոստիկանության աշխատակիցները իր նկատմամբ ևս կիրառել են բռնություն՝ հարվածներ հասցրել մարմնի տարբեր մասերին:[43]	1
Դեպք 6. Քաղաքացին ՀՀ ոստիկանության Տաշիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ հիշյալ բաժնի ծառայողը մայիսի 28-ին՝ ժամը 03:35-ի սահմաններում, իրեն բերել է ոստիկանության բաժին, որի մուտքի դիմաց բռունցքով հարվածել է դեմքին՝ պատճառելով մարմնական վնասվածք:[44]	1
• **սպառնալիք հնչեցնելը**	**1**
Դեպք 1. Ապրիլի 29-ին՝ ժամը 10:30-ին քաղաքացուն ՀՀ ոստիկանության Արարատի բաժանմունքի աշխատակիցները բերման են ենթարկել ոստիկանության Վեդիի բաժին, որտեղ նրան սպառնացել են ծեծի ենթարկվել, ինչի արդյունքում նա քննիչի մոտ տվել է իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:[45]	1
Ընդամենը	**36**

[42] Ոստիկանները բռնության գործադրմամբ քաղաքացուն և դստերը տեղափոխել են բաժին՝ խոչընդոտելով նրանց մասնակցությանը Սերժ Թանկյանի մամուլի ասուլիսին, http://www.ccc.am/hy/1428493746/139/3918

[43] Ոստիկանները վիճաբանել, ապա բռնություն են կիրառել քաղաքացիների նկատմամբ. հարուցվել է քրեական գործ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4857

[44] Քաղաքացին հայտնել է, որ պաշտոնատար անձը ոստիկանության բաժնի դիմաց իր նկատմամբ բռնություն է կիրառել, http://www.ccc.am/hy/1428493746/3/4860

[45] Քաղաքացին ապօրինի պահվել է ոստիկանությունում և ծեծվելու վերաբերյալ սպառնալիքներից վախենալով՝ տվել է սուտ ցուցմունքներ, http://www.ccc.am/hy/1428493746/3/4836

2015 թ. 2-րդ եռամսյակի ընթացքում հավաքների ժամանակ ոստիկանության կողմից մարդու իրավունքի խախտման դեպքերի ընդհանուր տվյալներ

Հավաքների ժամանակ հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել մարդու իրավունքների խախտման 49 դեպք, որոնցից 1-ի դեպքում խախտվել է ազատ տեղաշարժվելու իրավունքը, 11-ի դեպքում՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 1-ի դեպքում՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 4-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, 2-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը և լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 2-ի դեպքում՝ գույքի անձեռնմխելիության իրավունքը, 1-ի դեպքում՝ գույքի անձեռնմխելիության իրավունքը և լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 1-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 1-ի դեպքում՝ լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 20-ի դեպքում՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 1-ի դեպքում՝ կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը, 3-ի դեպքում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը, 1-ի դեպքում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը և լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը:

Հավաքների ժամանակ տեղի ունեցած դեպքերից 1-ը գրանցվել է Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում, 3-ը՝ Շիրակի մարզ Գյումրի քաղաքում, 45-ը՝ Երևանում:

Հավաքների ժամանակ գրանցված դեպքերից 10 դեպքում խախտվել է 1 հոգու իրավունք, 2 դեպքում՝ 2 հոգու իրավունք, 1 դեպքում՝ 3 հոգու իրավունք, 2 դեպքում՝ 4 հոգու իրավունք, 1 դեպքում՝ 5 հոգու իրավունք, 3 դեպքում՝ 6 հոգու իրավունք, 1 դեպքում 8 հոգու իրավունք, 1 դեպքում՝ 9 հոգու իրավունք, 4 դեպքում՝ 13 հոգու իրավունք, 1 դեպքում՝ 25 հոգու իրավունք, 1 դեպքում՝ 237 հոգու իրավունք, մյուս 22

դեպքերի համար հնարավոր չէ որոշել այն անձանց թիվը, ում իրավունքները ոտնահարվել են:

Հաշվետու ժամանակահատվածում հավաքների ժամանակ գրանցված դեպքերի հակիրճ նկարագրություններ՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (կամ անգործության)

	Դեպքերի թիվ
Ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտում	**1**
• **հավաքի մասնակիցների մեքենային հետևելը և այն կանգնեցնելը**	**1**
Դեպք 1. Ապրիլի 22-ին «Հայ կանանց ճակատ»-ը բողոքի ակցիա է իրականացրել Հանրապետության հրապարակում, որը ոստիկանները խոչընդոտել են, ապա, ակցիայի մասնակիցներից մեկի խոսքերով, ճանապարհային ոստիկաններն իրենց հետևել են և կանգնեցրել են մեքենան:[46]	1
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	**11**
• **անհիմն կերպով ոստիկանություն հրավիրելը**	**1**

[46] Ոստիկաններն ասեղներով պայթեցրել են ակցիայի մասնակիցների փուչիկները, խլել շապիկները, http://galatv.am/hy/news/106501/

Դեպք 1. Հունվարի 19-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանին, ով մասնակցում էր էլեկտրաէներգիայի թանկացման դեմ հավաքին, մոտեցել են մի քանի օպերլիազորներ և պահանջել են մեքենայով գնալ դեպի Կենտրոնի ոստիկանության բաժին՝ պատճառաբանելով, թե նրա մեքենան գտնվում է հետախուզման մեջ: Իոաննիսյանի խոսքով՝ դրանք այն օպերլիազորներն են եղել, որոնց ինքը լուսանկարել էր էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ակցիայի ընթացքում: Այն բանից հետո, երբ նա դեպքի մասին տեղեկացրել է ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին ու իրավապաշտպան Արթուր Սաքունցին և վերջինս ժամանել է դեպքի վայր, ոստիկաններն ասել են, թե շփոթել են մեքենայի համարը:[47]	1
• **բերման ենթարկում**	**10**
Դեպք 1. Ապրիլի 22-ին, Հիմնադիր Խորհրդարանի անդամ Անի Նավասարդյանը բերման է ենթարկվել ոստիկանական բաժին այն բանից հետո, երբ մերժել է ոստիկանի՝ երթի ժամանակ թմբուկ չզարկելու պահանջը և հրաժարվել է իր թմբուկը հանձնել ոստիկանին: Նրա նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն ՀՀ վարչական օրենսգրքի 172.3 հոդվածով (ոստիկանության ծառայողին վիրավորելը): Արձանագրություն կազմելուց հետո նրան ազատ են արձակել:[48]	1
Դեպք 2. Ոստիկանները մայիսի 26-ին առավոտյան Հիմնադիր խորհրդարանի 9 աջակիցների բերման են ենթարկել: Երիտասարդները մայիսի 30-ին, ժամը 18:30-ին Ազատության հրապարակում անցկացվող «100-ամյակը առանց ռեժիմի» շարժման հանրահավաքի վերաբերյալ իրազեկման պաստառներ էին փակցնում էլեկտրասյուների վրա: Նրանց բերման են ենթարկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 172.2 հոդվածի (Հասարակական վայրերն օգտագործելու կանոնները խախտելը) պահանջները խախտելու հիմքով:[49]	1

[47] Ազատության հրապարակից բերման ենթարկվածներին ազատեցին, http://www.epress.am/2015/06/20/%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D5%BE-%D5%A1%D5%B6%D5%B1%D5%AB%D6%84-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D6%8A%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4.html

[48] ԵՊՀ ուսխորհրդի անդամն ու անվտանգության աշխատակիցը խոչընդոտեցին ուսանողների բողոքի ակցիան. «Մեր տարածքից դո՛ւրս եկեք», http://www.aravot.am/2015/04/22/563658/

[49] ՀԽ-ի երիտասարդ աջակիցը պատմում է՝ ինչպես են այսօր առավոտյան իրենց բերման ենթարկել, http://168.am/2015/05/26/495573.html

Դեպք 3. Մայիսի 27-ին Ապարանում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքի ակցիայի մասնակից 8 երիտասարդների ոստիկանությունը բերման է ենթարկել արևածաղիկի սերմ ուտելու համար: Ոստիկանները պատճառաբանել են, թե երիտասարդները տարածքը աղտոտում են:[50]	1
Դեպք 4. Մայիսի 27-ին՝ լուսադեմին, ոստիկանությունը բերման է ենթարկել Հիմնադիր խորհրդարանի 6 անդամների, ովքեր մայիսի 30-ին կայանալիք հանրահավաքի վերաբերյալ իրազեկման թռուցիկներ էին փակցնում վահանակներին: Բերման ենթարկելիս իրավապահները որևէ հիմնավորում չեն ներկայացրել, սակայն հասարակական վայրերն օգտագործելու կանոնները խախտելու պատճառաբանությամբ ենթարկել են վարչական տույժի:[51]	1
Դեպք 5. Ոստիկանները բերման են ենթարկվել հունիսի 4-ին ՀՀ նախագահական նստավայրի դիմաց զոհված զինծառայողների ծնողների ակցիային միացած և որպես բողոքի նշան գետնին նստած Արայիկ Պետրոսյանին: Նրա նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, ինչից հետո ազատ է արձակվել:[52]	1
Դեպք 6. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ էլեկտրաէներգիայի թանկացման մասին հունիսի 17-ի նիստի ժամանակ քաղաքացիները հանձնաժողովի շենքի դիմաց պահանջում էին դադարեցնել նիստը: Որոշումն ընդունելուց հետո հանձնաժողովի շենքի առջև առաջացավ քաշքշուկ, որի արդյունքում արդյունքում ոստիկանության կողմից վարչական բերման ենթարկվեց 6 անձ՝ Հովհաննես Չամիչյանը, Գոռ Սարգսյանը, Ռուսլան Բարսեղյանը, Հայկ Պետրոսյանը, Հուրի Բաղդասարյանը և Նարեկ Գալաջյանը: Նրանց նկատմամբ արձանագրություն է կազմվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով՝ ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը, այնուհետև ակտիվիստները բաց են թողնվել:[53]	1

[50] Ապարանում «սեմոչկա» ուտելու համար բերման են ենթարկել երիտասարդներին. http://www.aravot.am/2015/05/27/575998/

[51] Անցած գիշերը բերման են ենթարկվել ՀԽ-ի վեց անդամներ, http://www.azatutyun.am/content/article/27039584.html

[52] Բերման է ենթարկվել ակտիվիստ Արայիկ Պետրոսյանը, http://www.azatutyun.am/archive/news/20150604/2031/2031.html?id=27053204

[53] Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքող 6 անձ բերման է ենթարկվել ոստիկանություն, http://www.aravot.am/2015/06/17/582640/ http://www.lragir.am/index/arm/0/right/view/116108

Դեպք 7. Հունիսի 19-ին Սարյանի պուրակում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ակցիայի մասնակցիներ Անտոն Իվչենկոյին և Հայկ Սարգսյանին մոտեցել են քաղաքացիական հագուստով անձինք և տարել են ոստիկանության Կենտրոնի բաժին: Նրանք բերման էին ենթարկվել իրենց հետ անվադողեր ունենալու պատճառով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի կասկածանքով, սակայն մեղադրանք չի առաջադրվել:[54]	1
Դեպք 8. Ի զորակցություն Երևանի ցուցարարների Գյումրիի Թատերական հրապարակում հոսանքի թանկացման դեմ նստացույց իրականացնող ակտիվիստներից 13-ը հունիսի 23-ի առավոտյան բերման են ենթարկվել Գյումրի քաղաքի ոստիկանության Կումայրիի բաժին և հարցաքննվելուց հետո ազատ են արձակվել:[55]	1
Դեպք 9. Ոստիկանության տեղեկություններով հունիսի 23-ի առավոտյան Բաղրամյան պողոտայում նստացույցը ցրելու ընթացքում ուժով բերան է ենթարկվել 237 անձ, որոնց սահմանված ժամկետից երկար պահել են ոստիկանական բաժանմունքներում:[56]	1
Դեպք 10. Հունիսի 28-ին 23:05-ին Չարենցավանի բնակիչ Վարդան Մակինյանին Ազատության հրապարակում գտնվող ցայտաղբյուրի մոտից բերման են ենթարկել՝ առանց որևէ հիմնավորում ներկայացնելու և բաց են թողել հաջորդ օրն առավոտյան: Նրա հավաստմամբ ոստիկանության բաժին էին տարել ևս 5 հոգու:[57]	1
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• **բերման ենթարկում**	**1**

[54] Ազատության հրապարակից բերման ենթարկվածներին ազատեցին, http://www.aravot.am/2015/06/19/583844/
[55] Գյումրիում բերման ենթարկվածները ազատ են արձակվել, http://www.azatutyun.am/archive/news/20150623/2031/2031.html?id=27088135
[56] Նախնական տեղեկություններով ոստիկանության բաժիններ է տարվել 237 անձ, http://www.azatutyun.am/archive/news/20150623/2031/2031.html?id=27087462
[57] Ինչպես են քաղաքացուն բերման ենթարկել և փողերը վերցրել, http://www.lragir.am/index/arm/0/right/view/116879

Դեպք 1. Հունիսի 23-ի առավոտյան Բաղրամյան պողոտայի ցույցը ցրելիս այն լրագրողներն ու օպերատորները, որոնք հրաժարվել են ոստիկաններին հանձնել տեսագրող ու լուսանկարող խցիկները և դրանց հիշողության սարքերը, ուժի գործադրմամբ բերման են ենթարկվել ոստիկանության բաժիններ: Այդ անձինք են՝ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության լրագրող Փայլակ Ֆահրադյանը, «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Մկրտիչ Կարապետյանը, Panarmenian.net-ի ֆոտոլրագրող Կարապետ Սահակյանը, news.am-ի լրագրող Արսեն Սարգսյանը, «Հետքի» լրագրողներ Անի Հովհաննիսյանը և Հրանտ Գալստյանը, Epress.am-ի օպերատոր Տիգրան Հակոբյանը, 1ին.am-ի աշխատակից Արեն Մկրտչյանը, «Ասպարեզ» թերթի և «Asparez.am»-ի գլխավոր խմբագիր Լեւոն Բարսեղյանը, անկախ լրագրող Սեդա Մավյան, «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Գարիկ Հարությունյանը, «Արմենիա» հեռուստաընկերության լրագրողներ Դավիթ Դավթյանը և Խաչատուր Եսայանը:[58]	1
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում	**4**
• **անգործություն (ցուցարարներին սպառնացող անձանց նկատմամբ համապատասխան գործողությունների չձեռնարկում)**	**1**
Դեպք 1. Հունիսի 22-ին Ազատության հրապարակում ընթացող նստացույցի ժամանակ քաղաքացիական հագուստով անձինք մոտեցել են և սպառնացել ջարդուփշուր անել բարձրախոսներն ու ծեծել ակտիվիստներին, սակայն այնտեղ հերթապահող ոստիկանները չեն միջամտել սպառնալիքներ հնչեցնող երիտասարդների ու ակտիվիստների ընդհարմանը:[59]	1
• **ցուցարարին վիրավորելը**	**2**
Դեպք 1. Ապրիլի 22-ին դեպի դեսպանատներ իրականացվող երթի մասնակից՝ Հիմնադիր Խորհրդարանի անդամ Անի Նավասարդյանին ոստիկանության Կենտրոնականի բաժին տանելու ընթացքում ոստիկանները նրան վիրավորել են[60]:	1

[58] 7 կազմակերպություններ հայտարարություն են տարածել լրագրողների նկատմամբ բռնության վերաբերյալ, http://armtimes.com/hy/read/65889
#ElectricYerevan. Բռնության ենթարկված լրագրողների պատմությունները, http://media.am/Attacks-against-journalists-during-Electric-Yerevan

[59] Անհայտ անձինք սպառնացել են ծեծել նստացույց անցկացնող ակտիվիստներին, http://www.azatutyun.am/archive/news/20150622/2031/2031.html?id=27085522

[60] ԵՊՀ ուսխորհրդի անդամն ու անվտանգության աշխատակիցը խոչընդոտեցին ուսանողների բողոքի ակցիան. «Մեր տարածքից դո՛ւրս եկեք», http://www.aravot.am/2015/04/22/563658/

Դեպք 2. Հունիսի 20-ին էլէկտրաէներգիայի թանկացման դեմ Գյումրիում տեղի ունեցող երթի ժամանակ ՇՄ փոխոստիկանապետ Վահրամ Ենգոյանը հրեց ու վիրավորեց երթի մասնակիցներից մեկին՝ տնտեսագետ, Երևանի տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դասախոս Կարեն Պետրոսյանին, նրան «թափթփուկ» անվանեց:[61]	1
• **քաղաքացիների հետ ոչ պատշաճ տոնով հաղորդակցություն**	**1**
Դեպք 1. Հունիսի 13-ին նախագահական նստավայրի մոտից զոհված զինծառայողների ծնողներին հեռացնելուց հետո ոստիկանները սկսեցին անհարգալից տոնով խոսել քաղաքացիների հետ, մասնավորապես, նրանցից մեկը ծնողին դիմեց հետևյալ կերպ. «Մի՛ խփի, ա՛յ կնիկ», իսկ մյուսը հայտարարեց, թե մայրերը «եկել են շոու սարքելու»:[62]	1
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք ի խախտում	**2**
• **ԶԼՄ-ների աշխատակիցներին հայհոյելը**	**1**
Դեպք 1. Հունիսի 23-ի առավոտյան՝ Բաղրամյան պողոտայում ընթացող նստացույցը ցրելու ընթացքում քաղաքացիական հագուստով անձը հայհոյել է lragir.am-ի լրագրող Թեհմինե Ենոքյանին: Ոստիկանները հայհոյել են նաև Epress.amի օպերատոր Տիգրան Հակոբյանին:[63]	1
• **լրագրողին վիրավորելը**	**1**
Դեպք 1. Հունիսի 28-ին լրագրողներից մեկի այն հարցին, թե ոստիկապետը սպառնո՞ւմ է ցուցարարներին, Վլադիմիր Գասպարյանը պատասխանեց. «Ուրեմն լսում ես ինչ եմ ասում՝ էս երկրի համար մի բան արա գոնե, լեզուդ շաղ տալով չի: Չքվիր աչքիցս»:[64]	1
Գույքի անձեռնմխելիության իրավունքի խախտում	**2**
• **գույքը խլելը**	**2**

[61] Վլադիմիր Գասպարյանի «բարեփոխված» փոխոստիկանապետի բիրտ պահվածքն ու հայհոյախառն բառապաշարը, http://www.aravot.am/2015/06/20/584074/

[62] Ոստիկանները հարվածում ու սադրում էին սևազգեստ մայրերին, http://www.epress.am/2015/05/13/264953.html

[63] Epress.amի օպերատորը, լրագրող ներկայանալով, մահակի արժանացավ, http://www.epress.am/2015/06/23/epress-am%D6%8A%D5%AB-%D6%85%D5%BA%D5%A5%D6%80%D5%A1%D5%BF%D5%B8%D6%80%D5%A8-%D5%AC%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D5%B2-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AC%D5%B8%D5%BE.html
Հայհոյանք լրագրողի հասցեին, https://www.youtube.com/watch?v=70BucLxImfQ

[64] Վովա Գասպարյանը հունից դուրս եկավ. Փողոցը կմաքրենք մնացողներից, http://www.lragir.am/index/arm/0/country/view/116825

Դեպք 1. Հունիսի 19-ին Երևանի Ազատության հրապարակում, որտեղ տեղի էր ունեցել ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացման հավաքը, և սկսվել էր նստացույց, ոստիկանները խլել են մի խումբ անարխիստների կողմից հրապարակ բերված անվադողերը:[65]	1
Դեպք 2. Հունիսի 28-ին բերման ենթարկված Չարենցավանի բնակիչ Վարդան Մակինյանի հաղորդմամբ իրենից վերցրել են իրեն պատկանող 18,000 դրամը:[66]	1
Գույքի անձեռնմխելիության իրավունքի խախտում, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• **ԶԼՄ-ների տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի կոտրում կամ խլում**	**1**
Դեպք 1. Հունիսի 23-ի առավոտյան Բաղրամյան պողոտայում ոստիկանական գործողությունների արդյունքում ջարդվել է «Ազատություն» ռադիոկայանի տեսախցիկը և լրագրողի հեռախոսը, ACTV-ի օպերատոր Աշոտ Բոյաջյանի լուսանկարահանող սարքը, epress.am-ի 3 տեսանկարահանող սարքերը, վնասվել է «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Մկրտիչ Կարապետյանի տեսախցիկը, ինչպես նաև խլվել են «News.am»-ի եւ «iLur.am»-ի թղթակիցներ Աիդա Հովհաննիսյանի և Հակոբ Կարապետյանի ֆոտոխցիկները:[67]	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում	**1**
• **բերման ենթարկվածին փաստաբանի հետ հանդիպել թույլ չտալը**[68]	**1**

[65] Նստացույց Ազատության հրապարակում, http://armtimes.com/hy/read/65757

[66] Ինչպես են քաղաքացուն բերման ենթարկել և փողերը վերցրել, http://www.lragir.am/index/arm/0/right/view/116879

[67] 7 կազմակերպություններ հայտարարություն են տարածել լրագրողների նկատմամբ բռնության վերաբերյալ, http://armtimes.com/hy/read/65889

#ElectricYerevan. Բռնության ենթարկված լրագրողների պատմությունները, http://media.am/Attacks-against-journalists-during-Electric-Yerevan

[68] Նմանատիպ այլ դեպքեր ներկայացված են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ «Մարդու իրավունքների խախտումները էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ» զեկույցում, http://hcav.am/wp-content/uploads/2015/06/zekuyc-arm.pdf

Դեպք 1. ՀՀ փաստաբանների պալատի անդամ, իրավապաշտպան Ռոբերտ Ռևազյանի հաղորդմամբ իրեն հունիսի 23-ին ուժով դուրս են հրավիրել ոստիկանության Շենգավիթի բաժանմունքից և թույլ չեն տվել հանդիպել իր վստահորդին՝ Հովհաննես Իշխանյանին, ով նույնպես առավոտյան Բաղրամյան պողոտայում բերման ենթարկվածների թվում էր: Ոստիկանության Նոր Նորքի բաժանմունքում նույնպես փաստաբաններին և Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներին ներս չէին թողնում:[69]	1
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• **լրագրողին ոստիկանական բաժանմունքից հեռացնելը**	**1**
Դեպք 1. Հունիսի 23-ին ոստիկանության Նոր-Նորքի բաժնում սպան հրելով շենքից հեռացրել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրողին, ով բաժանմունքում զրուցում էր առավոտյան բերման ենթարկված ցուցարարների հարազատների հետ:[70]	1
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	**20**
• **հավաքի խոչընդոտում**	**19**
Դեպք 1. Ապրիլի 15-ին ՀՀ նախագահի նստավայրի դարպասների դիմաց «Հայ Կանանց Ճակատ» նախաձեռնության կողմից բողոքի ակցիա էր կազմակերպվել՝ «Հիմնադիր խորհրդարան»-ի ձերբակալված անդամներին ազատելու պահանջով: Ակցիայի մեկնարկին կանայք կանգնել են նախագահականի դարպասների մոտ, ոստիկանները փորձել են հրելով և քաշքշելով հեռացնել նրանց, այնուամենայնիվ, բողոքողները որոշ ժամանակ պաստառները բացած կանգնել են Բաղրամյան 26-ի դիմաց: Այդ ընթացքում ոստիկաններն ակցիայի մասնակիցներին հորդորել են չմոտենալ նախագահականի դարպասներին, անցնել փողոցը և ակցիան շարունակել դիմացի մայթին[71]:	1

[69] Ոստիկանական բաժանմունքում բռնի ուժով դուրս են հանում իրավապաշտպաններին, http://www.aravot.am/2015/06/23/584983/

[70] «Ազատության» նկարահանող խմբին հրելով ոստիկանության բաժնից դուրս հանեցին, http://www.azatutyun.am/archive/news/20150623/2031/2031.html?id=27087643

[71] Նախագահականի դիմաց կանայք պահանջեցին ազատել քաղբանտարկյալներին, http://www.epress.am/2015/04/16/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A4%D5%AB%D5%B4%D5%A1%D6%81-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5%D6%84-%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%A5%D6%81%D5%AB.html

Դեպք 2. Ապրիլի 17-ին Ազատության հրապարակում Հիմնադիր խորհրդարանի հրավիրած հանրահավաքից հետո մեկնարկել է երթ: Սայաթ Նովա-Աբովյան խաչմերուկի մոտ ոստիկանները երթի մասնակիցներին թույլ չեն տվել բացել «100-ամյակն առանց ռեժիմի» շարժման առաջնորդ Ժիրայր Սեֆիլյանի նկարով պաստառը:[72]	1
Դեպք 3. Ապրիլի 22-ին «Հայ կանանց ճակատ»-ը բողոքի ակցիա է իրականացրել Հանրապետության հրապարակում՝ իրենց ձեռքերին ունենալով քաղբանտարկյալների անուններով փուչիկներ, կրել են շապիկներ նրանց նկարներով, ինչպես նաև՝ ցուցապաստառներ, որոնցով պահանջել են ազատ արձակել իրենց քաղաքական հայացքների համար կալանավորվածներին: Ոստիկանները նրանց խաղաղ ցույցը խոչընդոտել են. նախ ասեղներով պայթեցրել են փուչիկները, ապա խլել են շապիկները, պաստառները և փորձել են բերման ենթարկել «Հայ կանանց ճակատ»-ի անդամների[73]:	1
Դեպք 4. Մի խումբ երիտասարդներ ապրիլի 22-ին ԵՊՀ-ի մոտից երթ են սկսել դեպի այն երկրների դեսպանատներ, որոնք դեռ չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ոստիկանները երթի մասնակիցներին արգելել են թմբուկներ զարկել՝ պատճառաբանելով, թե դրանով խանգարում են դասապրոցեսը[74]:	1
Դեպք 5. Ապրիլի 29-ին Հիմնադիր խորհրդարանի մի խումբ երիտասարդներ ցանկանում էին քաղբանտարկյալների մասին իրազեկման ակցիա անցկացնել Հյուսիսային պողոտայում՝ սակայն ոստիկանները նրանց ճանապարհը փակել են:[75]	1
Դեպք 6. Մայիսի 1-ին «Նաիրիտ» գործարանի մի քանի տասնյակ աշխատակիցներ Երևանի Ազատության հրապարակում հավաք էին անցկացնում՝ պահանջելով նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպում: Ոստիկանները, պատ կազմած, նրանց թույլ չէին տալիս մոտենալ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի մուտքին:[76]	1

[72] «Հայեր միացեք, Ժիրայրն է կանչում». Հիմնադիր խորհրդարանը երթ է անցկացնում, http://armtimes.com/hy/read/62849

[73] Ոստիկաններն ասեղներով պայթեցրել են ակցիայի մասնակիցների փուչիկները, խլել շապիկները, http://galatv.am/hy/news/106501/

[74] ԵՊՀ ուսխորհրդի անդամն ու անվտանգության աշխատակիցը խոչընդոտեցին ուսանողների բողոքի ակցիան. «Մեր տարածքից դո՛ւրս եկեք», http://www.aravot.am/2015/04/22/563658/

[75] «Ազատություն քաղբանտարկյալներին» կարգախոսով նստացույց Հյուսիսային պողոտայում, http://www.armtimes.com/hy/read/63377

[76] Ոստիկանները թույլ չտվեցին մոտենալ Օպերային թատրոնին. նաիրիտցիները շարժվում են դեպի Կառավարություն, http://www.armtimes.com/hy/read/63485

Դեպք 7. Ոստիկաններն «Ազատություն քաղբանտարկյալներին» նախաձեռնության երթի մասնակիցներին մայիսի 9-ին թույլ չեն տվել մոտենալ «Վարդաշեն» եւ «Նուբարաշեն» ՔԿՀ շենքերին, որտեղ գտնվում էին Հիմնադիր Խորհրդարանի՝ կալանավորված անդամները:[77]	1
Դեպք 8. Մայիսի 13-ին ոստիկանները նախագահական նստավայրի դարպասի մոտից բռնի ուժով հեռացրել են բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների՝ բողոքի ակցիա անցկացնող ծնողներին, ովքեր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպում էին պահանջում:[78]	1
Դեպք 9. Մայիսի 20-ին՝ բանակում զոհված զինվորների ծնողների դեմ ոստիկանության աշխատակիցների կիրառած բռնությունները դատապարտող ակցիայի ժամանակ, քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարին փորձել է ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի, Երևանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանի, Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանի նկարներով՝ յուրաքանչյուրի տակ «նամուս չունի» գրառմամբ, պաստառ ամրացնել Ազգային ժողովի դարպասներին,սակայն ոստիկանները թույլ չեն տվել:[79]	1
Դեպք 10. Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ մայիսի 27-ին կազմակերպված երթի ժամանակ ոստիկանները, Հանրապետության հրապարակում պատ կազմած, թույլ չէին տալիս, որ քաղաքացիներն անցնեին Հանրապետության հրապարակի կենտրոնական հատվածը, սակայն քաղաքացիները ճեղքեցին շղթան ու հրապարակի կենտրոնում նստացույց կազմակերպեցին:[80]	1
Դեպք 11. Հունիսի 4-ին խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների մայրերը ակցիա են իրականացրել ՀՀ նախագահի նստավայրի դիմաց, սակայն ոստիկանները խոչընդոտել են նրանց ակցիան՝ թույլ չտալով, որ կանայք Բաղրամյան փողոցի նախագահականի մայթով իջնեն դեպի նախագահական նստավայրի դիմաց և պահանջելով անցնել դիմացի մայթով:[81]	1

[77] Ոստիկանները «Հիմնադիր խորհրդարանի» անդամներին թույլ չտվեցին մոտենալ ՔԿՀ-ներին, http://news.am/arm/news/266052.html

[78] Ոստիկանները հարվածում ու սադրում էին սևազգեստ մայրերին, http://www.epress.am/2015/05/13/264953.html

[79] «Նամուս չունի». Վարդգես Գասպարիի պաստառը ԱԺ դարպասներին, http://armtimes.com/hy/read/64299

[80] Անցած գիշերը բերման են ենթարկվել ՀԽ-ի վեց անդամներ, http://www.azatutyun.am/content/article/27039584.html

[81] Ընդհարում և բերման ենթարկում նախագահականի առաջ, http://www.aravot.am/2015/06/04/578518/

Դեպք 12. Հունիսի 4-ին ՀՀ նախագահական նստավայրի դիմաց զոհված զինծառայողների ծնողների ակցիային մասնակցող Վարդգես Գասպարիին, ով որպես բողոքի նշան պառկել էր գետնին, նստեցրել են ոստիկանական մեքենա և հեռացրել են ակցիայի իրականացման վայրից: Ակտիվիստն «Ազատություն» ռադիոկայանին փոխանցել է, որ իրեն ճանապարհին, իր խոսքով, դուրս են շպրտել ավտոմեքենայից:[82]	1
Դեպք 13. Հունիսի 11-ին ոստիկանները, պատ կազմած, խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողներին թույլ չէին տալիս քայլել նախագահականի մայթով՝ այն պատճառաբանությամբ, որ մայրերը «ոչ հարիր արտահայտություններ են» անում և նախագահականի մոտ ակցիա են պատրաստվում անցկացնել: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ այնտեղ ժամանած աշխատակիցը նշեց, որ նրանք իրավունք ունեն թե՛ քայլել, թե՛ ակցիա իրականացնել, եթե չեն խոչընդոտում նախագահականի բնականոն աշխատանքը: Ոստիկաններն ի վերջո զոհված զինծառայողների ծնողներին թույլ տվեցին քայլել նախագահականի մայթով, սակայն, երբ նրանք որոշեցին կանգնել նախագահական նստավայրի դիմաց, ոստիկանները նրանց հեռացրեցին:[83]	1
Դեպք 14. Խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների մայրերը հունիսի 18-ին հավաքվել էին ՀՀ նախագահի նստավայրի առաջ, սակայն ոստիկանները, պատ կազմած, նրանց թույլ չէին տալիս մոտենալ նստավայրին, թեև Մարդու իրավունքների պաշտպանը մայրերին գրություն էր տվել առ այն, որ նրանք իրավունք ունեն ազատ տեղաշարժվել, ինչպես նաև ակցիա իրականացնել նախագահի նստավայրի դիմաց, եթե չեն խոչընդոտում նախագահականի բնականոն աշխատանքը:[84]	1

[82] Բերման է ենթարկվել ակտիվիստ Արայիկ Պետրոսյանը, http://www.azatutyun.am/archive/news/20150604/2031/2031.html?id=27053204

[83] Սևազգեստ մայրերին հրում էին. ոստիկանն ափսոսում էր ծաղիկները, http://www.epress.am/2015/06/11/%D5%BD%D6%87%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B0%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7%D5%AB%D5%B6%E2%80%A4-%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6.html

[84] Ոստիկանները կրկին խոչընդոտում են սեւազգեստ մայրերին. ՊՆ պաշտոնյան անգամ չիջավ մեքենայից, http://www.aravot.am/2015/06/18/583066/
http://www.epress.am/2015/06/18/%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%A2%D5%AA%D5%AB%D5%B7%D5%AF%D5%A8-%D5%BD%D6%87%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5.html

Դեպք 15. Հունիսի 18-ին նախագահական նստավայրի դիմաց հավաքված զոհված զինծառայողների ծնողներին սատարելու նպատակով ակտիվիստ Վարդգես Գասպարին, ի նշան բողոքի, պառկել էր գետնին, որից հետո 6 ոստիկաններ, ոտքերից ու ձեռքերից բռնելով, նրան տարան նախագահականի դիմացի մայթ: Ոստիկանները նախագահականի մոտից հեռացրեցին նաև գեղանկարիչ Արա Պետրոսյանին, ով նույնպես այնտեղ էր կանանց սատարելու նպատակով:[85]	1
Դեպք 16. Հունիսի 19-ին գյումրեցիների՝ էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքի ակցիան սկսվեց Գյումրու Թատերական հրապարակից, որտեղից շարժվեցին դեպի Շիրակի մարզպետարանի շենք, սակայն ոստիկանները փորձում էին թույլ չտալ քայլել կենտրոնական փողոցով, սակայն նրանք ի վերջո տեղի տվեցին:[86]	1
Դեպք 17. Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված նստացույցի մասնակիցները հունիսի 20-ի առավոտյան փորձել են Ազատության հրապարակում արկղերով ծածկ պատրաստել, որպեսզի ցանկացողները կարողանային հանգստանալ այնտեղ և արևից պաշտպանվել, սակայն ոստիկանները թույլ չեն տվել:[87]	1
Դեպք 18. Հունիսի 20-ին Գյումրիի Սայաթ –Նովա փողոցի մոտ ոստիկանությունը սկսեց խոչընդոտել էլէկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված երթը: ՇՄ փոխոստիկանապետ Վահրամ Ենգոյանը, ով քաղաքացիական հագուստով էր, ոստիկաններին հրահանգում էր ճանապարհից դուրս բերել քաղաքացիներին և մեքենաները տանել տուգանային հրապարակ:[88]	1

[85] Ոստիկաններն ու բժիշկը սևազգեստ մայրերի դեմ, http://www.epress.am/2015/06/18/%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%A2%D5%AA%D5%AB%D5%B7%D5%AF%D5%A8-%D5%BD%D6%87%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5.html

[86] Կատաղի ու անզիջում պայքար Գյումրիում՝ հոսանքի թանկացման դեմ, http://www.aravot.am/2015/06/19/583799/

[87] Ոստիկանները թույլ չեն տվել ծածկ կառուցել. հրապարակում նստացույցը շարունակվում է, http://www.epress.am/2015/06/20/%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A9%D5%B8%D6%82%D5%B5%D5%AC-%D5%B9%D5%A5%D5%B6-%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%AE%D5%A1%D5%AE%D5%AF-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82.html

[88] Բողոքի ակցիան մեկնարկել է. «Գյումրին չի պատրաստվում վճարել էլեկտրաէներգիայի սահմանված գինը», http://galatv.am/hy/news/113453/

Դեպք 19. Հունիսի 22-ին ոստիկանության հատուկ ջոկատայինների շուրջ 100 հոգանոց խումբը շղթա էր կազմել Ազգային ժողովի գլխավոր մուտքի մոտ՝ «Ո՛չ թալանին» նախաձեռնության գլխավորած երթի ճանապարհը դեպի նախագահական նստավայր փակելու նպատակով:[89]	1
• **նստացույցի ցրում**[90]	**1**
Դեպք 20. Հունիսի 23-ի վաղ առավոտյան՝ 5:30-ից սկսած ոստիկանությունը ջրցան մեքենաների օգտագործմամբ ցրեց Բաղրամյան պողոտայում տեղի ունեցող խաղաղ նստացուցը, որի մասնակիցները պահանջում էին չեղարկել էլեկտրաէներգիայի սակագինը թանկացնելու մասին ՀԾԿՀ որոշումը:[91]	1
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի խախտում	**1**
• **շենքերի պատերից քաղբանտարկյալների նկարների պոկում**	**1**
Դեպք 1. Ապրիլի 29-ին «Հակահարված art» խմբի անդամները քաղբանտարկյալներ Շանթ Հարությունյանի, Ժիրայր Սեֆիլյանի և Պավլիկ Մանուկյանի նկարները փակցել էին Հյուսիսային պողոտայի հարակից շենքերի պատերին, սակայն կարճ ժամանակ անց դրանք պոկվել են պատերից: Խմբի անդամները վստահ են, որ ոստիկաններն են ոչնչացրել իրենց աշխատանքները: Ոստիկանները նրանցից մեկին նույնիսկ ասել են. «Կոնկրետ մեզ համար մեկ է, սիրուն գործ է, ուղղակի ասում են, անում ենք»:[92]	1
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտում	**3**
• **հավաքի մասնակցին հարվածելը**	**1**
Դեպք 1. Հունիսի 18-ին զոհված զինծառայողների՝ նախագահական նստավայրի դիմաց հավաքված ծնողներին էր միացել գեղանկարիչ Արա պետրոսյանը, ում ոստիկանները գլխից քաշեցին և հարվածեցին:[93]	1
• **ցուցարարներին և լրագրողներին հրելը**	**1**

[89] Բաղրամյան փողոցը փակ է, ոստիկանները շղթա են կազմել ԱԺ գլխավոր մուտքի մոտ, http://www.azatutyun.am/archive/news/20150622/2031/2031.html?id=27086557

[90] Հունիսի 23-ի առավոտյան ոստիկանության կողմից էլեկտրաէներգային թանկացման դեմ Բաղրամյան պողոտայում ընթացող նստացույցը ցրելու ընթացքում իրականացված ապօրինի գործողությունների իրավական հիմանվորումները ներկայացված են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ «Մարդու իրավունքների խախտումները էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ» զեկույցում http://hcav.am/wp-content/uploads/2015/06/zekuyc-arm.pdf

[91] Ոստիկանները ուժ գործադրեցին ցուցարարների, լրագրողների նկատմամբ, http://www.azatutyun.am/archive/news/20150623/2031/2031.html?id=27087319

[92] Շանթ Հարությունյանի, Ժիրայր Սեֆիլյանի նկարները հեռացվել են շենքերի պատերից, http://www.azatutyun.am/content/article/26986991.html

[93] Ոստիկաններն ու բժիշկը սևազգեստ մայրերի դեմ, http://www.epress.am/2015/06/18/%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%A2%D5%AA%D5%AB%D5%B7%D5%AF%D5%A8-%D5%BD%D6%87%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5.html

Դեպք 1. Հունիսի 22-ին էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնելու մասին ՀԾԿՀ որոշումը չեղարկելու պահանջով Բաղրամյան պողոտայում մեկնարկած նստացույցի ժամանակ մահակներով զինված ոստիկանները մոտենում էին նստացույցի մասնակիցներին, հրում էին լրագրողներին ու քաղաքացիներին:[94]	1
• **ցուցարարներին ծեծի ենթարկելը**	**1**
Դեպք 1. Հունիսի 23-ի առավոտյան Բաղրամյան պողոտայի ցույցը ցրելու նպատակով ջրցան մեքենաները գործի դնելուց հետո ոստիկանները քաղաքացիական հագուստով անձինք մահակներով և այլ միջոցներով ծեծի են ենթարկել ցուցարարներին: Առողջապահության նախարարության տեղեկություններով շտապօգնության ծառայություն է դիմել ոստիկանական գործողություններից տուժած 25 անձ, որոնցից 15-ը տեղափոխվել են հիվանդանոց:[95]	1
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտում, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• **ԶԼՄ-ների աշխատակիցներին ծեծի ենթարկելը**	**1**
Դեպք 1. Հունիսի 23-ի առավոտյան Բաղրամյան պողոտայում ոստիկանների կողմից ծեծի են ենթարկվել «ԳԱԼԱ» հեռուստաընկերության լրագրող Փայլակ Ֆահրադյանը, «Ազատություն» ռադիոկայանի լրագրողներ Սիսակ Գաբրիելյանը, Արթուր Պապյանը և օպերատոր Գարիկ Ազիբեկյանը, 1in.am-ի օպերատորներ Կարեն Չիլինգարյանը, Հովսեփ Հովսեփյանը և Գոռ Հովհաննիսյանը, Epress.am-ի օպերատոր Տիգրան Հակոբյանը, Panarmenian.net-ի թղթակից Նիկոլայ Թորոսյանը եւ ֆոտոլրագրող Կարապետ Սահակյանը, «Ասպարեզ» թերթի և «Asparez.am»-ի գլխավոր խմբագիր Լևոն Բարսեղյանը, անկախ լրագրող Գևորգ Ղազարյանը, ilur.am-ի լրագրող Հակոբ Կարապետյանը:[96]	1
Ընդամենը	**49**

[94] Բաղրամյան պողոտայում նստացույց է. դեպի Բաղրամյան 26 մուտքը փակ է զրահամեքենաներով, http://armtimes.com/hy/read/65818

[95] Ոստիկանները դաժանորեն ցրում են մարդկանց Բաղրամյան պողոտայից, http://www.epress.am/2015/06/23/%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%B6%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9%E2%80%A4-%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A4%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%80%D5%A5%D5%B6-%D6%81%D6%80.html

[96] 7 կազմակերպություններ հայտարարություն են տարածել լրագրողների նկատմամբ բռնության վերաբերյալ, http://armtimes.com/hy/read/65889

#ElectricYerevan. Բռնության ենթարկված լրագրողների պատմությունները, http://media.am/Attacks-against-journalists-during-Electric-Yerevan

Աղյուսակներ

Աղյուսակ 1
2015թ. առաջին և երկրորդ եռամսյակներում գրանցված մարդու իրավունքների խախտումների դեպքեր

Խախտված իրավունք	Դեպքերի թիվ	
	I եռամսյակ	II եռամսյակ
Ազատ տեղաշարժվելու իրավունք	0	1
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	12	21
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	1	0
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	7	9
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	2
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	1	3
Գույքի անձեռնմխելիության իրավունք	0	2
Գույքի անձեռնմխելիության իրավունք Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք	0	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	6	5
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	2	4
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	19	20
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք	0	3
Կյանքի իրավունք և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	1	0
Տեղեկատվություն ստանալու իրավունք	3	1
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	4	10
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1
Ընդամենը	**56**	**85**

Աղյուսակ 2
2015թ. առաջին և երկրորդ եռամսյակներում գրանցված մարդու իրավունքների խախտումների անհատական դեպքեր

Խախտված իրավունք	Դեպքերի թիվ	
	I եռամսյակ	II եռամսյակ
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	3	10
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	1	0
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	3	5
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք	1	3
Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք	0	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	3	4
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	1	3
Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք	0	2
Տեղեկատվություն ստանալու իրավունք	3	1
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	3	7
Ընդամենը	**18**	**36**

Աղյուսակ 3

2015թ. առաջին և երկրորդ եռամսյակներում հավաքների ժամանակ գրանցված մարդու իրավունքների խախտումների դեպքեր

Խախտված իրավունք	Դեպքերի թիվ	
	I եռամսյակ	II եռամսյակ
Ազատ տեղաշարժվելու իրավունք	0	1
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք	9	11
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	4	4
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	2
Գույքի անձեռնմխելիության իրավունք	0	2
Գույքի անձեռնմխելիության իրավունք Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	3	1
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	1	1
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք	19	20

Կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք	0	1
Կյանքի իրավունք և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք	1	0
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք	1	3
Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք, Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունք	0	1
Ընդամենը	**38**	**49**

Աղյուսակ 4

2015թ. առաջին և երկրորդ եռամսյակներում ընթացքում գրանցված դեպքերի վայրեր

Վայրը	**Դեպքերի թիվ**	
	I եռամսյակ	**II եռամսյակ**
ք. Երևան	36	67
Արագածոտնի մարզ, ք. Ապարան	0	1
Արարատի մարզ, ք. Վեդի	0	2
Արմավիրի մարզ, ք. Արմավիր	2	0
Արմավիրի մարզ, ք. Մեծամոր	1	0
Լոռու մարզ, ք. Ալավերդի	0	2
Լոռու մարզ, ք. Վանաձոր	0	2
Լոռու մարզ, ք. Տաշիր	0	1
Սյունիքի մարզ, ք. Գորիս	0	2
Սյունիքի մարզ, ք. Կապան	0	1
Տավուշի մարզ, ք. Իջևան	1	0
Շիրակի մարզ, ք.Գյումրի	14	7
ԼՂՀ, ք. Բերձոր	1	0
Անհայտ	1	0
Ընդամենը	**56**	**85**

Աղյուսակ 5

2015թ. առաջին և երկրորդ եռամսյակներում ընթացքում գրանցված դեպքերի ժամանակ մարդու իրավունքի խախտումների թվեր

Դեպքերի թիվ	Մարդու իրավունքի խախտումների թիվ	
	I եռամսյակ	II եռամսյակ
33		1
34	Անհայտ	
26		Անհայտ
20	1	
6		2
4		13
4	2	
2	5	
2		3
3		6
3		5
3		4
1		237
1	38	
1		25
1	21	
1	19	
1		9
1		8

1		7
1	4	
1	3	
Ընդամենը	**123**	**434**

.